


Շտապե՛ք երեխաներ, թոչեւ ենք սովորելու



Ռուսերենից թարգմանությունը՝  
Նունե Մովսիսյանի

Դպիր

Բովանդակությունը

[Շտապե՛ք երեխաներ, թոչել ենք սովորելու](#)(հատվածներ)

[Հավատը և սերը](#) (հատվածներ)

*Շալվա Ամոնաշվիլին վրացի մանկավարժ, հոգեբան, ռուսական խորհրդային մանկավարժական դպրոցի անվանի ներկայացուցիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԳԱ անդամ:*

*«Դպիրում» հրապարակվել են նաև.*

*«Որտե՞ղ ես, ժպիտ իմ. խոհեր ուսուցանոցում» գիրքը,*

[Դասամիջոցների մանկավարժությունը և մանկական չարաճճությունը](#)  
(հատված «Բարև, երեխաներ» գրքից)

Լյուդմիլա Պեչատնիկովա [«Շալվա Ամոնաշվիլու բաց դասը»](#):

## Շտապէ՛ք երեխաներ, թռչել ենք սովորելու Հատվածներ

- Պապի՛կ, էդ ի՞նչ ես փսփսում,- հարցրեց տղան՝ նկատելով, որ պապը քնելուց առաջ ինքն իրեն ինչ-որ բան է շշնջում:

- Միտքը Սրտիս եմ տալիս, փոքրի՛կ,- պատասխանեց նա:

Տղան զարմացավ.

- Ի՞նչ է դա նշանակում:

Իմաստուն պապն ասաց նրան.

- Չեմ ուզում վիճել ինձ զայրացրած հարևանի հետ, չգիտեմ՝ ինչպես վարվել:

Ահա և միտքը կդնեմ Սրտի մեջ և կքնեմ, իսկ առավոտյան Միրտը կհուշի ինչ անել:

- Բա որտեղի՞ց Միրտը գիտի, պապի՛կ:

- Միրտն ամեն ինչ գիտի, ես ամբողջ կյանքում սովորում եմ նրանից: Քեզ էլ եմ խորհուրդ տալիս՝ երբ կփնտրես որևէ դժվար խնդրի պատասխան, երբ ինչ-որ բան քեզ համար հասկանալի չի լինի, քնելուց առաջ միտքը տուր Սրտին, իսկ առավոտյան պատասխանները պարզ կլինեն: Միայն թե դա արա հավատով:

\*\*\*

Նստել էր ծերունին ճամփեզրին ու նայում էր ճանապարհին: Տեսնում է՝ գալիս է մի մարդ, իսկ նրա ետևից՝ փոքրիկ մի տղա: Մարդը կանգ է առնում, տղային պատվիրում ծերունուն իրենց ունեցածից հաց ու ջուր տալ:

- Ի՞նչ ես անում այստեղ, ծերո՛ւկ,- հարցնում է անցորդը:

- Սպասում եմ քեզ,- պատասխանում է ծերունին: Քեզ են, չէ՞, վստահել այս երեխայի դաստիարակությունը:

- Ճի՛շտ է,- զարմանում է մարդը:

- Ուրեմն վերցրու այս իմաստությունը.

Եթե ուզում ես մեկի համար ծառ տնկել՝ տնկի՛ր պտղատու ծառ:

Եթե ուզում ես մեկին ձի նվիրել՝ նվիրի՛ր լավագույն նժույգը:

Իսկ, եթե քեզ վստահել են դաստիարակության գործ, ապա հավատա՛ երեխայի թռիչքին:

- Ինչպե՞ս ես կարող եմ դա անել, ծերո՛ւկ, եթե ինքս թոչեւ չգիտեմ,- զարմացավ մարդը:

- Այդ դեպքում տղային դաստիարակության մի՛ վերցրու,- ասաց ծերունին՝ սևեռուն հայացքն ուղղելով երկինք:

Անցան տարիներ:

Ծերունին նստել էր նույն տեղում և նայում էր երկնքին:

Տեսնում է՝ թոչում է տղան, իսկ ետևից՝ նրա ուսուցիչը:

Իջնելով ծերունու մոտ՝ նրանք խոնարհվեցին:

- Ծերո՛ւկ, հիշո՞ւմ ես, դու ինձ պատվիրեցիր տղային թներ տալ: Ես գտա ճանապարհը... Տեսնո՞ւմ ես՝ ինչպես են նրա թները աճել,- հպարտությամբ ասաց ուսուցիչը՝ քնքշորեն նայելով իր աշակերտի թներին:

Բայց ծերունին թեթևակի հպվեց ուսուցչի թներին, շոյեց ու շնջաց.

- Ինձ ամենաշատը ուրախացրին քո՛ փետուրները...

\*\*\*

Եթե մարդիկ չեն կարողանում թոչել, թող թոչել սովորեցնեն իրենց երեխաներին:

Այն էլ սովորեցնեն թոչել

Բարձր,

Արագ,

Հեռու,

Գեղեցիկ:

Կգա ժամանակը, երբ երեխաները կտարածեն իրենց թներն ու կսավառնեն:

Թող մեծերը պարզապես հետևեն երեխաներին, որպեսզի վերջիններս չընկնեն:

Եվ այնժամ կպարզեն, որ իրենք ևս թոչում են:

Այս մեթոդը հարկավոր է կիրառել այն դեպքում, երբ մարդիկ ընդհուպ մոտեցել են անդունդի եզրին և փրկվելու այլևս ելք չկա:

Այսինքն՝ սկսել անմիջապես:

Եվ հարկավոր է գիտակցությունից ջնջել միտքը, թե «Սովորել կարող եմ միայն այն, ինչը սովորեցնում են»:

Դա սուտ է, և այն կործանարար է:

Դրա փոխարեն հարկավոր է ընդունել օրենք. «Սովորիր՝ սովորենք»:

Դա է Ճիշտը, և այն փրկություն է:

Միայն թե չմոռանաք այդ օրենքին հավելել հավատ, հույս, սեր, անկեղծություն, գեղեցկություն և ստեղծագործական համբերություն:

\*\*\*

Եթե մարդը ստեղծվել է Աստծո նմանությամբ և պատկերով, ապա այդ դեպքում ի՞նչ է կրթությունը:

Կրթությունը Աստծո պատկերի բացահայտումն է երեխայի մեջ:

Այն մարդու հոգևոր էության իմացական ձգտումն է:

Այն Անմահության ճանապարհի, Անսահմանության ճանապարհի ընթրնումն է:

Այն դեպի Լույս տանող ուղի է:

Այն գիտակցության ընդլայնման միջոցով կյանքի ճանաչողություն է:

Այն Երկրի վրա կյանքի վերափոխման ձգտումն է՝ վեհությունը և հանդիսավոր գեղեցկությունը:

Կրթությունը համընդհանուրի բարեկեցությունն է:

Կրթությունը Երկրի վրա Լույսի հաղթանակն է:

Կրթությունը արթնացնում է թևեր ունեցող երեխային, բացահայտում է նրա էությունը, սովորեցնում է թռչել մտքի արագությամբ՝ բարձր, հեռու:

Իսկ ինչո՞ւ թռչել քայլելու փոխարեն:

Որովհետև այդպես է հունցված մեր հոգևոր բնությունը, որովհետև այն ունի Տիեզերքի բոլոր հատկանիշները:

Եվ նա, ով կարողանում է թռչել, ոգևորություն է հաղորդում երկրային կյանքին՝ այն դարձնելով առավել գեղեցիկ և հարուստ:

Հետևաբար, երջանկացնելով և՛ իրեն, և՛ մարդկանց:

\*\*\*

Շտապե՛ք երեխաներ, թռչել ենք սովորելու:

Իսկ դրա համար հարկավոր է ոգեշնչվել մտքով:

- Իսկ ի՞նչ է միտքը:

Մտածողը մեզ բացատրում է.

Միտքը Տիեզերքում առկա էներգիաներից ամենահզորն է, այն ունի ինչպես ստեղծագործական, այնպես էլ կործանարար ուժ:

Միտքը հոգևոր հարթակում նորածին էակ է, և այն անխորտակելի է:

Միտքը կյանք է, և կյանքը մտքի արդյունք է:

Միտքը կուտակվում է տարածության մեջ՝ ազդելով միջավայրի վրա: Այն ինչպես մարդկանց ընդհանուր վարքագծի, այնպես էլ առանձին անհատների վրա ազդելու ուժ ունի:

Մարդն իր մտքի ուժով ունակ է ինչպես արարելու, այնպես էլ ոչնչացնելու:

Միտքը ծնում է ուժեր, որոնք կարծես թարմացնում-նորացնում են Տիեզերքը: Եվ եթե ասեմ, որ մտքի արդյունք այդ էակները ներգրավված են Տիեզերքի շինարարության մեջ, հասկացե՛ք ոչ թե փոխաբերական, այլ հենց էլ ուղիղ իմաստով:

Բարի, մաքուր միտքը ձգում է գեղեցիկ ուժերին: Իսկ չար միտքը, ինչպես մեռած աղբ, թափվում է Երկրի վրա:

Միտքը թռիչքի բարձրությունն է:

Միտքը թռիչքի հեռավորությունն է:

Միտքը թռիչքի արագությունն է:

Միտքը թռիչքի գեղեցկությունն է:

Մտածողը մեզ առաջադրանք է տվել՝ սովորե՛ք մտածել գեղեցիկի մասին:

Շնորհակալություն Դասի համար, Մտածո՛ղ:

\*\*\*

Թներ կան:

Խանդավառությունն առ թռիչք կա:

Թռիչքը թռչունին բնորոշ բան է:

Բայց...ախր, թռչնակը վանդակի մեջ է:

Այսպես նա մեզ դուր է գալիս. թող երգի մեզ համար, թող մեր կողքին մնա և զարդարի մեր կենցաղը:

Եվ թռչնակը երգում է: Իսկ ինչի՞ մասին:

Թռչնակը ցատկում է թառից թառ և հակառակը: Մա ամենն է, ինչ մնացել է թռիչքից:

Հետո կգա ժամանակ, և մենք թոչնակին դուրս կբերենք վանդակից: Բայց թոչել նա արդեն չի կարող. թևերն այլևս այն չեն լինի: Ինքն էլ կարծես չի ուզում թոչել, մոռացել է՝ ինչ է թոչիչքը և ինչի համար են իրեն պետք թևերը:

Եվ թոչունը կդառնա նենգ կատվի որս:

Ցավակցություններս՝ նույնիսկ արցունքներն այլևս անկարող են օգնել թոչունին:

Թոչունը թոչելու համար է ստեղծվել, նույնիսկ երբ դեռ մայրիկ-թոչունը թուխս չէր նստել: Բայց մենք, մեր մտքերի և «երևակայության» արդյունքում, զրկեցինք նրան թոչիչքից: Մենք թոչունին պարտադրեցինք վանդակում ապրել: Այնուհետև մայրիկ-թոչունը ձու հանեց վանդակում, փոքրիկ թոչնակը ծնվեց վանդակում, մեծացավ վանդակում: Եվ, ի վերջո, թոչունը մոռացավ իր Ինքնության մասին՝ տարածություն նվաճելը, միջատներ ոչնչացնելն ու Արարչի համար օրհներգեր երգելը:

Ինչո՞ւ ենք մենք այդպես վարվում, մարդի՛կ:

Թոչունը մեր երեխան է:

Ինչո՞ւ ենք մենք ազատությունը իլում երեխայից:

Եվ դա ի սկզբանե անում ենք մեր մտքերի ու երևակայության օգնությամբ՝ քաշելով նրան թակարդը:

Ինչ որ մեկը հենց նոր ասա՞ց. «Դուք որտե՞ղ եք տեսել, որ վանդակի մեջ երեխա են պահում: Իսկ որտե՞ղ եք տեսել մեր թակարդները»:

Հեռու գնալ պետք չէ:

Ամբողջ կյանքում ազատություն ենք որոնում ու չենք գտնում: Իսկ, եթե գտնում էլ ենք ազատության փշրանքներ, նույն պահին սահմանափակումներ ենք դնում, ինչ է թե ինչ-որ մեկին հանկարծ շատ բաժին չհասնի:

Սա վանդակ չէ՞, սա թակարդ չէ՞:

Հիմա մենք կբռնենք ու կգրենք հենց երկնքում, որպեսզի բոլորը գիտակցեն.

«Երեխայի մտքի և կամքի վրա բռնություն գործադրելը ծանր հանցագործություն է»:

\*\*\*

Շտապե՛ք երեխաներ, թոչել ենք սովորելու:

Ի՞նչ է մեզ հարկավոր, որպեսզի թևեր աճեն:

Հարկավոր է ձգտում:

Դուք տեսե՞լ եք՝ ինչպես են մրջյունները մրջնանոցում աշխատում: Նրանք տքնաջան կերպով կառուցում են իրենց պետությունը:

Դուք տեսե՞լ եք՝ ինչպես են մեղունե ըր փեթակ ստեղծում, ինչպես են բզզալով հավաքում մեղրը: Մեղուները ձգտում ունեն:

Տեսե՞լ եք՝ ինչպես են կռունկները սեպաձև թռչում: Կռունկները ձգտում ունեն:

Իսկ ինչպես է առվակը սարն ի վար իջնո՞ւմ: Առվակը նույնպես ձգտում է:

Ոչ մի բան, նույնիսկ՝ քարը, գոյություն չունի առանց ձգտումի:

Ձգտում է Բնությունը, ձգտում է Տիեզերքը:

Մարդկության զարգացումը ձգտման արդյունք է:

Կանգառը մահ է, ռիթմից ընկնելը՝ սկսվող վայրէջք, իսկ ձգտման լարումը՝ նորի սկիզբ:

Մեզանից յուրաքանչյուրը գիտի՝ ինչ ասել է ձգտման ուժ, իսկ մեր ներսում կանասն այն իրագործելու ուղեցույցը:

Ձգտումն է ստեղծում գեղեցկություն և ներդաշնակություն ինչպես Երկրում, այնպես էլ՝ Երկնքում:

Շտապե՛ք երեխաներ, թռչել ենք սովորելու:

Ձեր մաքուր ձգտումները ապագայի մասին հուշումներ են մեզ համար.

հասկանում ենք, թե ինչ պետք է մենք անենք:

Տեսե՛ք՝ ինչ գեղեցիկ են ասել իմաստունները:

Ձգտումը Բարձրագույն Մտքի զարդն է:

Ձգտումը բոլոր քարանձավների բանալին է:

Ձգտումը արծվի թև է:

\*\*\*

Շտապե՛ք երեխանե՛ր...

Դուք եկել եք տաճար, որպեսզի աղոթե՞ք:

Ո՛չ, դուք եկել եք պահանջելու:

Դուք աղոթում եք ոչ հացի կտորի, ոչ էլ հիվանդ մոր համար:

Դուք շորթողներ եք, կողոպտիչներ, հետն էլ հանդես եք գալիս Քրիստոսի անունից:

Եվ ի՞նչ ես պատրաստվում անել թոցրածդ:



Տալու ես ա՛յ այն մեկին, որ քո տերն է և քեզ է հետևում փողոցի անկյունում կանգնած:

Քո աչքերում ասելություն կա:

Քո ներսում կոպտություն ու զայրույթ կա: Անորոշություն ու անվստահություն էլ կա: Ո՞վ ձեզ վաճառեց սատանային, երեխանե՛ր: Գահավիժելու վտանգը մեծ է: Երկինքը աղմկում է:

\*\*\*

- Ուսուցի՛չ, տուր մեզ ազատ ապրելու օրինակներ, որ սովորենք:

Եվ ուսուցիչն ասաց.

Երբ ինչ-որ մեկը կտրում է քո ճամփան, լուռ մի կողմ քաշվիր, եթե գիտես քո անցնելիք ճանապարհը:

Երբ քեզ անհրաժեշտ է կացարան գտնել, բարի եղիր քեզ հյուրընկալող տիրոջ հանդեպ:

Երբ հեռանալու ժամը գա, մնացողին հաջողություն մաղթիր, անկախ ամեն ինչից:

Երբ ծաղկած ծառ տեսնես քո ճանապարհին, մի՛ կոտրիր այն, հնարավոր է՝ այն ուրախություն պարգևի ուրիշներին:

Երբ լսում ես ողջունի կանչ, անտարբեր մի՛ անցիր:

Երբ լսում ես երգող թռչունի, ծառը մի՛ թափահարիր:

Երբ տեսնում ես, որ երեխաներ են գալիս, ասա. «Մենք սպասում էինք ձեզ»:

Երբ բարի գործ ես անում, այն մի՛ գրանցիր քո նոթատետրում:

Երբ մտածում ես վիրավորանքի մասին, նայի՛ր հատակին թափված աղբին:

\*\*\*

Մենք հարցրինք ուսուցչին.

- Ովքե՞ր են քո երեխաները:

Նա պատասխանեց մեզ.

- Իմ երեխանե՞րը:

Նա է, ով կապված չէ նյութական իրերին և չի հիշում դրանց գները:

Ով թռչուն է սիրում:

Ով գնահատում է առավոտյան թարմ օդը:

Նա է, ում համար գործողությունն ավելին է, քան ժամանակը:

Ով հասկանում է ծաղիկներին:

Ով քաջ է՝ առանց նկատելու այն:

Ով չի սիրում անիմաստ շաղակրատել:

Ով գնահատում է գեղեցկության ուրախությունը:

Ով հասկանում է կյանքը տեսանելիից անդին:

Ով զգում է, ինչ և երբ պետք է վերցնել իր իսկ Գավաթից:

Ով շտապում է կատարել իր համար նախատեսվածը:

Աղբյուրը՝ Амонашвили Ш.А. Спешите, дети, будем учиться летать, Москва 2005

## **Հավատը և սերը**

### **Հատվածներ**

**Մանկավարժական էսսե**

**Դպրոցի ճշմարտությունը**

Ի՞նչ է կարողանում և ի՞նչ չի կարողանում Դպրոցը:

Դպրոցը սիրում է և սեր է սերմանում:

Բայց չի կարող ասել և ասելություն սովորեցնել:

Դպրոցը հավատում է և հավատ է դաստիարակում:

Բայց չի կարող դավաճանել և դավաճանություն դաստիարակել:

Դպրոցը ստեղծում է և ոգեշնչվում ստեղծածով:

Բայց չի կարող կործանել և ոչնչացման հրահանգ տալ:

Դպրոցը պաշտպանում է երեխային և ճիշտ ուղղորդում նրա ճակատագիրը:

Բայց չի կարող ոտնահարել երեխային և արհամարհել նրա ճակատագիրը:

Դպրոցը բարիք է գործում և բարություն է դաստիարակում:

Բայց չի կարող չարիք գործել և չարություն դաստիարակել:

Դպրոցը ազնիվ է և ազնվություն է դաստիարակում:

Բայց չի կարող կեղծ լինել և կեղծավորություն դաստիարակել:

Դպրոցը մեծարում է մայրենի լեզուն և բարեկրթություն է դաստիարակում:

Բայց չի կարող գոեհկաբանել և գոեհկություն դաստիարակել:

Դպրոցը Մտքերի Թագավորությունն է և դաստիարակում է ազատամտություն:

Բայց չի կարող մտքերի բանտապետ լինել և ստրուկ դաստիարակել:

Դպրոցը կարողանում է ընդլայնել գիտակցությունը:

Դպրոցը ապրում է հոգևորով ու Հավատով:

Նա մեռնում է առանց Ոգու և Հավատի:

Դպրոցը ամենայն լավն է:

Բայց չի կարող ոչինչ վատ ունենալ:

Դպրոցը Լուսավոր Հրեշտակ է և բերում է միայն Լույս:

Ամենը, ինչ դպրոցից չէ, ուրեմն բարի չէ:

Սա էլ հենց Ճշմարտությունն է Դպրոցի:

### **Անաստվածությամբ շնչող Դպրոցում**

Որբանում է միտքը,

Խամրում է գեղեցկությունը,

Արժեզրկվում է բարոյականությունը,

Նեղմտում է գիտակցությունը,

Նյարդայնանում է սիրտը,

Գիտելիքը դառնում է ապրանք,

Հիմարանում է կարեկցանքը,

Կուրանում են աչքերը վիավորանքից,

Տիրապետում է սեփականության զգացումը,

Գերիշխում է խավարը:

Ձեզ զայրացն<sup>՞</sup>ում է հասարակության անբարո վիճակը,

Դա անաստվածությունից է:

Ձեզ ջղայնացն<sup>՞</sup>ում է հեռուստատեսից թավիվող աղբը,

Դա անաստվածությունից է:

Ձեզ հունից հան<sup>՞</sup>ում են Համացանցի մթամած տարածքները, նույնը՝

ամսագրերում, նույնիսկ՝ գրքերո<sup>՞</sup>ւմ:

Դա անաստվածությունից է:

Իսկ անհարգալից վերաբերմո՞ւնքը: Իսկ տհաճ տեսարաննե՞րը: Իսկ հանցագործությո՞ւնը: Իսկ թմրամոլությո՞ւնը: Իսկ մարմնավաճառությո՞ւնը: Իսկ հարբեցողությո՞ւնը: Իսկ գողությո՞ւնը:

Այս ամենը անաստվածությունից են, խավարից են:

Աղանդները, կեղծ մարգարեները, մոգերը և նրանցից թունավորված միլիոնավոր հոգիները,

Սովը, չքավորությունը, զրկանքը, հուսահատությունը,

Նվաճողական պատերազմները, ագրեսիվությունը, ավերակ դարձած եկեղեցիներն ու սինագոգները, մզկիթներն ու թանգարանները, դպրոցը, մշակութային արժեքները,

Ամեն, ամենը անաստվածությունից են:

Աթեիզմի ցանցում հայտված դպրոց:

Մարդն առանց Ճշմարտության կորած մարդ է:

Կեղծ Ճշմարտությամբ մարդը՝ չար ու վատ մարդ:

Աղբյուրը՝ Амонашвили Ш.А. Вера и любовь. Москва-2009

Ռուսերենից թարգմանությունը՝ [Նունե Մովսիսյանի](#)